[1] Դուրս գրման ամսաթիվ			Հաշիվ վավերագիր (արտադրանքների, ապրանքների առաքման)	[2] Սերիա	[3] Համար
6	Մայիս	2019 թ.		Բ	6788334559
[4] Առաքման ամսաթիվ				Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
6	Մայիս	2019 թ.		Սերիա	Համար
				Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ	

	Պայմանագիր	
	[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
	18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի	
[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0 6 9 0 2 0 8 7
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0 6 9 0 2 0 8 7 / 1
[10] Անվանումը	«ԼՈՌՌԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՑԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57
[14] Լրացուցիչ տվյալներ	

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի	
[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0 2 6 3 1 2 6 3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	
[17] Անվանումը (ֆիզիկական անձի անուն, ազգանուն)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5
[20] Լրացուցիչ տվյալներ	
[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն
	Լիազորագիր: Համար
	Ամսաթիվ
[22] Մատակարարման (առաքման) եղանակը	
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

N	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնաց. հարկ	Այդ թվում՝ անցկ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 61200619 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

06/05/2019 12:06:16

/

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

02 ապրիլի, 2019թ. ք. Վանաձոր

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, երրորդ դասի խորհրդական Դ.Մանուչարյանս, վերանայելով վարույթում քննվող թիվ 61200619 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ գլխավոր դատախազի կողմից 25.01.2019 թվականի որոշում է կայացվել Աշոտ Ալիխանյանի կողմից սուտ մատնություն կատարելու դեպքի առթիվ նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին 2018 թվականի նոյեմբերի 12-ի որոշումը վերացնելու և թիվ 61200619 քրեական գործ հարուցելու վերաբերյալ:

2019 թվականի փետրվարի 07-ին թիվ 61200619 քրեական գործը ստացվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչությունում և ընդունվել վարույթ:

Թիվ 61200619 քրեական գործի նախաքննության ընթացքում տվյալներ են ստացվել, որ Աշոտ Ալիխանյանը 2018 թվականի հոկտեմբերի 25-ին՝ ՀՀ ոստիկանության Լոռու մարզային վարչության Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում, նախազգուշացված լինելով սուտ մատնություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին և գիտակցելով, որ իր տրամադրած տեղեկատվությունը կեղծ է, քրեական պատասխանատվության ենթարկելու դիտավորությամբ, կատարել է սուտ մատնություն՝ հանցագործության վերաբերյալ գրավոր հաղորդում է ներկայացրել այն մասին, որ իբր 2018 թվականի հոկտեմբերի 25-ին Վանաձոր քաղաքի Բուլղարական 2-րդ ավանի տնակներից մեկում իր ծանոթ՝ Վլադիմիր Հենրիկի Գասոյանը բացահայտ հափշտակել է իրեն պատկանող, 30.000 ՀՀ դրամ արժողությամբ բջջային հեռախոսը, նրան մեղադրելով ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության մեջ:

2019 թվականի փետրվարի 14-ին նշանակվել է ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն և ստացված եզրակացության համաձայն Աշոտ Վարդանի Ալիխանյանը տառապել ն տառապում է <<Թեթեթ աստիճանի մտավոր հետամնացություն վարքային խանգարումով>> քրոնիկ հոգեկան հիվանդությամբ: Այդ մասին են վկայում ինչպես անամնեստիկ տվյալները, այնպես էլ ներկա հետազոտման արդյունքները, որոնք թույլ են տվել նրա մոտ հայտնաբերել հիվանդությանը բնորոշ ցածր ինտելեկտ, մակերեսային դատողություններ, վերացական-տրամաբանական դատողությունների բացակայություն, համեմատման և ընդհանրացման ֆունկցիաների ցածր մակարդակ, պարզ թվաբանական գործողություններ կատարելու, կարդալու և գրելու դժվարություններ: Իրավախախտումը կատարելու պահին Աշոտ Ալիխանյանը հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման վիճակում չի գտնվել: Իրավախախտումը կատարելիս Աշոտ Ալիխանյանի մոտ առկա հոգեկան հիվանդությամբ պայմանավորված մտավոր զարգացվածության ցածր մակարդակը թույլ չի տվել նրան լիարժեքորեն հաշիվ տալու և ղեկավարելու իր գործողությունները, և գնահատելու դրանց վտանգավորության աստիճանը: Ուստի իրեն մեղսագրվող արարքի նկատմամբ Աշոտ Վարդանի Ալիխանյանին հարկ է ճանաչել սահմանափակ մեղսունակ: Նա հարկադիր բուժման կարիք չունի:

2019 թվականի մարտի 12-ին Աշոտ Ալիխանյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրություն չհեռանալու մասին և նույն ամսի մարտի 15-ին վերջինիս մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 333-րդ հոդվածի 1-ին մասով:

Բացի այդ՝ Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոցի թիվ 2-րդ տան բնակիչ Հայկ Խաչիկի Բաղդասարյանի հաղորդման վերաբերյալ նախապատրաստված նյութերով ՀՀ ՈԼՄՎ Վանաձոր քաղաքի Բազումի բաժնում տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ 2019 թվականի փետրվարի 23-ին՝ ժամը 19:00-ի սահմաններում, Վանաձոր քաղաքի Բաղրամյան 1-ին փողոցի 2-րդ նրբանցքի թիվ 44 տան բնակիչ Աշոտ Վարդանի Ալիխանյանը, Հայկ Բաղդասարյանին պատկանող Վանաձոր քաղաքի Խնձորուտ 2-րդ փողոցի թիվ 2-րդ հասցեում գտնվող մթերային խանութից փորձել է բացահայտ հափշտակել 8.000 ՀՀ դրամ արժողությամբ գույք և դիմել փախուստի, սակայն իր կամքից անկախ հանգամանքներում՝ խանութից փախուստի ժամանակ հափշտակած գույքը ձեռքից վայր ընկնելու պատճառով հանցագործությունն ավարտին չի հասցրել:

2019 թվականի մարտի 06-ին ՀՀ ոստիկանության Բազումի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 71155019 քրեական գործը:

2019 թվականի մարտի 07-ին քրեական գործը ստացվել է ՀՀ ՔԿ Լոռու մարզային քննչական վարչությունում և ընդունվել վարույթ:

Նախաքննությամբ պարզվել է, որ վերոհիշյալ դեպքի օրը Աշոտ Ալիխանյանը ոստիկանության Բազումի բաժնում գրավոր հաղորդում է ներկայացրել այն մասին, որ իր ծանոթ Անուշավան Մուրադյանը իրեն ծեծի է ենթարկել և բաճկոնի գրպանից բացահայտ հափշտակել 5000 ՀՀ դրամը: Սակայն դրանից հետո Աշոտ Ալիխանյանը հայտնել է, որ իրականում իրեն խանութից սննունդ գողանալու փորձ կատարելուց հետո ծեծի է ենթարկել նշված խանութի սեփականատերը, նրանից բողոք պահանջ չունի, նշել է նաև, որ Անուշավան Մուրադյանն իրեն չի ծեծել և 5000 ՀՀ դրամը բացահայտ չի հափշտակել, ինքը ստել է այդ հանգամանքը:

Այսինքն թիվ 71155019 քրեական գործով Աշոտ Ալիխանյանին վերագրվում են առերևույթ կատարված երկու հանցավոր արարքներ՝ նախատեսված ՀՀ քրեական օրենսգրքի 34-176-րդ հոդվածի 1-ին մասով և 333-րդ հոդվածի 1-ին մասով:

2019 թվականի ապրիլի 1-ին թիվ 71155019 քրեական գործը միացվել է թիվ 61200619 քրեական գործին:

Ստացված հարցման պատասխանի համաձայն Աշոտ Ալիխանյանը դիսպանսերում և նարկոլոգիական կաբինետում հաշվառված չէ, սակայն առկա քաղվածք՝ ստացված 2012 թվականին «Նորք» հոգեբուժական կենտրոնից, որի համաձայն Աշոտ Ալիխանյանը տառապում է «թեթև աստիճանի մտավոր հետամնացություն» հիվանդությամբ:

Նկատի ունենալով, որ քրեական գործով նշանակություն ունեցող մի շարք հանգամանքներ պարզաբանելու համար անհրաժեշտ են հատուկ մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ, 243-245-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

ՈՐՈՇԵՑԻ

1.Սույն քրեական գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել ՀՀ «Լոռու մարզի հոգենյարդաբանական դիսպանսեր» ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2.Փորձաքննության ներկայացնել սույն որոշումը, Աշոտ Ալիխանյանը, իսկ քրեական գործի նյութերը կներկայացվեն փորձաքննության կատարման օրը:

3.Պարզաբանման համար փորձագետին [illegible]

ա. Աշոտ Ալիխանյանը հիշյալ արարքները կատարելուց առաջ, կատարման պահին և դրանից հետո որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել է թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հիվանդությամբ և երբվանից, այդ հիվանդությունը կրել է քրոնիկ բնույթ, թե ոչ:

բ. Եթե Աշոտ Ալիխանյանը տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, արդյոք այն զրկել է նրան իր կատարած արարքների վտանգավորությունը գիտակցելու կամ այն ղեկավարելու հանգամանքից, վերջինս մեղսունակ է, թե ոչ, նա հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ, եթե այո, ապա ինչպիսի հաստատությունում, և արդյոք բուժումը հակացուցված չէ:

գ. Հիշյալ արարքները կատարելու պահին Աշոտ Ալիխանյանն արդյոք չի գտնվել հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարման վիճակում և նա կարող էր այդ վիճակում գիտակցել իր գործողության վտանգավորությունը և ղեկավարել դա, թե ոչ:

Փորձագետին խնդրել պատասխանել այն հարցերին, որոնք թեև սույն որոշման մեջ չկան, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետի իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է կարևոր նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

4.Փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ քննիչ՝ **Դ.Հ.Մանուչարյան**